տառապատ են եւ որոնց ձիւնի հալքը, ջրի ակները մշտնջենական են: Ջուրն ու ջերմութիւնը այս երկրում այնքան զօրեղ է, որ Օսմանեան իշխանութեան վերջին 300 տարուայ քաղաքակրթական անկման շրջանում անդամ, ելեւմտական սնանկութեան օրերում Ճորոխի Աւազանը համայն Հայաստանին ձէթ ու ձէթուն, չոր միրգ, մաթ ու տնական կարասիք էր մատակարարում, փոխադարձաբար հացահատիկ, իւղ ստանում: Հնումը Կիսկիմի հովիտը, Հարշիշի դաշտերը մատակարարել են Կարնոյ շամբին, Բասենին, Կարսին այնքան բրինձ ու բամբակ, որ լիացրել են Հովտիկը (Օվաճըգ), Ալաշկերտը եւ Խնուսը: Ճորոխի Աւազանի դինին այնքան առատ է, որ միշտ մատակարարել է շրջակայ նահանգներին: Թթենուց պատրաստած օղին միշտ այծի տկերով տարածել են իրենց շուրջը: ԺԹ-րդ դարում Ծխախոտն այնպիսի ընտիր բերք արտադրեց, ինչպէս Մուլդուր, Արտանուչ, Տանձոտ, Շաւշէտ, Կիսկիմ, Իսպիր, որ շուկաներում այս մթերքի պահանջը նկատուեց:

Տեղական տնայնագործական բամբակի եւ բրդի գործուածները, կտաւ, շիլա, մանուսա եւ շալ, սրանց ներկուածքները իրենց դիրքը պահպանել են ամենավաղ ժամանակներից մինչեւ 1877, որից յետոյ խպառ տեղի տուին եւրոպական մեքենական